

Մերո Խանգադյան 100

Դեկտեմբերի 17-ին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ նվիրված անվանի գրող, արձակագիր Մերո Խանգադյանի ծննդյան 100- ամյակին:

Մերո Խանգադյանը մեծ գրող էր, ներկայացուցիչը գուցեն վերջին գրողական այն սերնդի, որն իր ամբողջ կյանքն անցկացրել է իր երկրի հետ միասին, իր վերածնված հայրենիքի հետ միասին, մասնակցել նրա համար մղած մարտերին ոչ միայն ռազմի դաշտում, այլև գրողների միության ամբիոնից, մամուլից, հեռուստատեսությամբ իր ողջ կեցվածքով, ժողովրդի հետ ունեցած իր խորը արմատներով:

Միլվա Կապուտիկյան

Նա մեր ազգի մեծագույն գրողներից է՝ մեծ, լուրջ, խորը: Նա Մխիթար Սպարապետի պես մի ժայռ էր: Պատիվ եմ ունեցել վայելելու նրա ընկերությունը՝ շատ անմիջական, շատ զվարթ, շատ սթափ մտքի տեր գեղեցիկ մարդ:

Խորեն Աբրահամյան

Մերո Խանգադյանը մեր մշակութային կյանքում վիթխարի երևույթ էր, վիթխարի երևույթ՝ որպես քաղաքացի, միշտ ժողովրդի ցավերով ապրող, անհանգիստ, բուռն, մարտական՝ ամբողջ կյանքում: Նա խորը հետք է թողել մեր և հասարակական, քաղաքական, և մշակութային կյանքում:

Սոս Մարգսյան